



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

0009 ք.Երևան, Կոռյուն 17

«14» նոյեմբերի 2023թ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գոհար Վարդանի Գրիգորյանին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագիրն իրավունքի ուժով ուժի մեջ մտնելու մասին

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի «Դատավորի նշանակման կարգը» վերտառությամբ 117-րդ հոդվածի համաձայն՝

1. Թեկնածուի համաձայնության դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը նրա թեկնածությունն առաջարկում է Հանրապետության նախագահին՝ ներկայացնելով նաև նրա անձնական գործը, թեկնածուի՝ դատավոր չլինելու դեպքում նրա կողմից ներկայացված և դրանց ստուգման արդյունքով ձեռք բերված փաստաթղթերը:

2. Առաջարկությունն ստանալու պահից ետոյա ժամկետում Հանրապետության նախագահն ընդունում է ներկայացված թեկնածուին նշանակելու վերաբերյալ հրամանագիր կամ առաջարկությունն առարկություններով վերադարձնում է Բարձրագույն դատական խորհուրդ:

3. Հանրապետության նախագահի կողմից Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությունն առարկություններով վերադարձվելու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը պարտավոր է նիստ հրավիրել:

4. Բարձրագույն դատական խորհուրդը Հանրապետության նախագահի առարկությունը չընդունելու հարցը քննարկում և որոշում է կայացնում խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ: Եթե Բարձրագույն դատական խորհուրդը չի ընդունում Հանրապետության նախագահի առարկությունը, ապա Հանրապետության նախագահը ետոյա ժամկետում ընդունում է ներկայացված թեկնածուին նշանակելու վերաբերյալ հրամանագիր կամ դիմում է Սահմանադրական դատարան:

5. Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ առաջարկությունը համապատասխանում է Սահմանադրությանը, ապա Հանրապետության նախագահը ետոյա ժամկետում հրամանագիր է ընդունում ներկայացված թեկնածուին նշանակելու վերաբերյալ:

6. Եթե Հանրապետության նախագահը ետոյա ժամկետում չի կատարում սույն հոդվածի 2-րդ, 4-րդ կամ 5-րդ մասերում նշված գործողությունները, ապա համապատասխան թեկնածուին նշանակելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով, ինչի մասին Բարձրագույն դատական խորհրդի նախագահը ետոյա ժամկետում հրապարակում է հայտարարություն դատական իշխանության պաշտոնական կայքում:

(...):

Բարձրագույն դատական խորհրդի նախագահի 2023 թվականի նոյեմբերի 2-ի թիվ ԴԴ/2622-23 գրությամբ Հանրապետության նախագահի քննարկմանն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի «Առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր պաշտոնում առաջին ատյանի այլ դատարանի դատավորին նշանակելու նպատակով թեկնածություն առաջարկելու վերաբերյալ» թիվ ԲԴԽ-89-Ո-271 որոշումը:

Հանրապետության նախագահի 2023 թվականի նոյեմբերի 6-ի գրությամբ Բարձրագույն դատական խորհրդին է ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԲԴԽ-89-Ո-271 որոշման վերաբերյալ առարկություն, որը քննարկվել է Բարձրագույն դատական խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 8-ին հրավիրված նիստում և չի ընդունվել:

Բարձրագույն դատական խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 9-ի թիվ ԴԴ/2712-23 գրությամբ կրկին Հանրապետության նախագահի քննարկման է ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի «Առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր պաշտոնում առաջին ատյանի այլ դատարանի դատավորին նշանակելու նպատակով թեկնածություն առաջարկելու վերաբերյալ» թիվ ԲԴԽ-89-Ո-271 որոշումը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 117-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում Հանրապետության նախագահի կողմից Գոհար Վարդանի Գրիգորյանին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր նշանակելու վերաբերյալ հրամանագիր չի ընդունվել և համապատասխան դիմում չի ներկայացվել Սահմանադրական դատարան՝ **հայտարարվում է, որ Գոհար Վարդանի Գրիգորյանին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագիրն իրավունքի ուժով ուժի մեջ է մտել 2023 թվականի նոյեմբերի 14-ին:**

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Վ. ՔՈՉԱՐՅԱՆ